

Խ. Ա. Ավետիսյան

ԶԱՆԳԵԶՈՒՐԻ ԲՆԱԿՉՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՆՐԱ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ

Սոցիալիստական արտադրության առավելություններից մեկը կայանում է նրանում, որ նա անհրաժեշտ պայմաններ է ստեղծում աշխատանքային ռեսուրսների ճիշտ տեղաբաշխման և լրիվ օգտագործման համար: Սոցիալիստական հասարակության մեջ, 16—59 տարեկան տղամարդկանց և 16—54 տարեկան կանանց լրիվ զբաղվածության ապահովումը և աշխատանքային ռեսուրսների նպատակասլաց օգտագործումը ժողովրդական տնտեսության ճյուղերում օրյեկտիվ անհրաժեշտություն է, կոմունիստական պարտիայի ծրագրային պահանջն է: Ահա թե ինչու աշխատանքային ռեսուրսների պլանաչափ բաշխումը և ճիշտ օգտագործումը ժողովրդական տնտեսության տարբեր ճյուղերի միջև միշտ եղել և մնում է Սովետական իշխանության տնտեսական քաղաքականության հիմնական խնդիր:

Դրանով առաջնորդվել և առաջնորդվում է պարտիան՝ երկրի ժողովրդական տնտեսության զարգացման, ինչպես նախորդ, այնպես էլ ապագա պլանները մշակելու ժամանակ: «ՍՍՌԿ ժողովրդական տնտեսության զարգացման 1959—1965 թվականների կոնտրոլ թվերի մասին» ՍՄԿՊ XX I համագումարի որոշումներում ևս հատուկ ուշադրություն դարձվեց ապագային ռեսպուբլիկանների կառույցներն ու արդյունաբերական օրյեկտները աշխատուժով ապահովելու և նրանց համար կուլտ-կենցաղային անհրաժեշտ պայմաններ ստեղծելու հարցերի վրա: Այդ տեսակետից էլ բնակչության աճի և աշխատանքային ռեսուրսների, ըստ տնտեսական ճյուղերի բաշխվածության, հարցերի ուսումնասիրությունը ինչպես ռեսպուբլիկայում, այնպես էլ առանձին շրջաններում լուրջ հետաքրքրություն է ներկայացնում:

Այս հոդվածի նպատակն է վերլուծել Զանգեզուրի բնակչության և աշխատանքային ռեսուրսների օգտագործման հարցերը:



Զանգեզուրի բնակչությունը (ներկա տերիտորիայի սահմաններում)¹ Արևելյան Հայաստանի Ռուսաստանին միացվելուց մինչև ցարական կառավարության առաջին մարդահամարը, այսինքն 66 տարվա ընթացքում, ավելացել է 6,2

¹ Նախկին Երզրավետապոլի նահանգի մեջ մտնող Սիսիանի, Գորիսի, Ղափանի ուստի կանական տեղամասերից կազմված Զանգեզուրի և Մեզրու գավառները 1920 թ. մտան Սովետական Հայաստանի կազմի մեջ, որպես նրա տերիտորիայի մի անբաժան մասը: Վարչատնտեսական նոր բաժանման ժամանակ, որ կատարվեց 1921 թ. կեսերին ՀԽՍՀ Կենտրոնական կոմիտեի կողմից, Զանգեզուրում ստեղծվեց երկու գավառ—Մեզրու և Զանգեզուրի: Վերջինիս մեջ մտան Գորիսի, Սիսիանի և Ղափանի գավառակները, իսկ 1930 թ. գավառները վերացնելու հետևանքով նրանք դարձան ռեսպուբլիկային ենթակա մարզեր: *Ներկայումս Զանգեզուրի մարզի տարածքը կազմում է 1920 թ. Զանգեզուրի և Մեզրու գավառների տարածքը:*



անգամ (1831 թ. 14030 մարդուց 1897 թ. հասել է 87257 մարդու)¹։ Դա կատարվել է ոչ այնքան բնական, որքան մեխանիկական աճի հաշվին, որ սկսվեց անցյալ դարի 30—40-ական թվականներին, երբ ապահովվեց հայրենիք վերադարձվող հայ բնակիչների անվտանգությունը և վերաբնակվողներին տրվեցին տնտեսական որոշ արտոնություններ. նրանք 6 տարով ազատվեցին հարկեր վճարելուց և ամեն տեսակի պարհակներ կատարելուց։

Առաջին համաշխարհային պատերազմի սկզբներին Զանգեզուրի բնակչությունը հասավ 111,4 հազարի։ Սակայն պատերազմի տարիներին և դաշնակների տիրապետության ժամանակ նրա բնակչության թիվը նվազեց։ Հայաստանում սովետական կարգերի հաստատման սկզբներին այն իջավ 75,5 հազարի²։

Իսկ Սովետական առաջին մարդահամարի ժամանակ (1926) Զանգեզուրի բնակչության թիվը մասամբ ավելացավ և հասավ 77 հազարի³։

Սովետական իշխանության պատմական հաղթանակը ապահովեց մեր ռեսպուբլիկայի քայքայված տնտեսության արագ վերականգնումը և նյութական անհրաժեշտ պայմաններ ստեղծեց բնակչության բարեկեցության և կուլտուրական մակարդակի բարձրացման համար։

Գյուղատնտեսության սոցիալիստական վերակառուցումը և արդյունաբերության զարգացումը բարերար ազդեցություն ունեցող Զանգեզուրի բնակչության բնական աճի և նրա աշխարհագրական տեղաբաշխվածության վրա։ Աշխատավորների կյանքի նյութական պայմանների և կուլտուրական մակարդակի անընդ վերելքի շնորհիվ խիստ բարձրացավ Զանգեզուրի բնակչության բնական աճը. 1939 թ. նրա բնակչության թիվը հասավ 95,7 հազարի՝ այսինքն՝ 1926 թ. համեմատությամբ ավելացավ մոտ 13 տոկոսով, իսկ 1897 թ. համեմատությամբ՝ 9,7 տոկոսով։ Քաղաքային բնակչությունը աճեց ավելի քան 2 անգամ, կազմելով ամբողջ բնակչության 14,7 տոկոսը, նախկինում եղած 7 տոկոսի դիմաց. իսկ յուրաքանչյուր քառակուսի կիլոմետր տարածության վրա ապրողների թիվը 17,1-ից հասավ 21,3 մարդու։ Վերջին մարդահամարի ժամանակ (1959) Զանգեզուրի բնակչությունը հասավ 117,4 հազարի, որի 43,3 տոկոսը կազմում է քաղաքային բնակչությունը, այսինքն՝ այն ավելացել է 3,7 անգամ՝ 1939 թ. համեմատությամբ, իսկ մեկ քառակուսի կիլոմետրի վրա ապրողների թիվը հասել է 26,2 մարդու, Ղափանի շրջանում՝ 34,7 մարդու, այսինքն 11,6 մարդով ավելի, քան եղել էր 1939 թվականին, Գորիսում—39,8 մարդու։

Քաղաքային բնակչության այդպիսի արագ աճը կատարվել է գյուղական որոշ բնակավայրեր քաղաքների և քաղաքատիպ ավանների վերածվելու, գյուղական բնակչության մի մասը քաղաքի արդյունաբերության և շինարարության մեջ ակտիվ կերպով ներգրավվելու, ինչպես և հետպատերազմյան տարիներում

¹ Հայկական ՍՍԻ, ՊԿԱ, ֆոնդ 93, գործ Ն Ն 50, 51, 52,

² Պ. Ա. Բ. Վ. Ս. — Հայաստանի բնակչությունը նախասովետական և սովետական շրջանում, Երևան, 1930, էջ 25.

³ Всесоюзная перепись населения 1926 г. Закавказская Социалистическая Федеративная Советская Республика, Москва, 1926, том XIV, стр. 5.

⁴ Плановое хозяйство, 1939, стр. 12.

այստեղ մշտական բնակություն հաստատած հայրենադարձների հաշվին: Միայն Ղափանի շրջանում այդ տարիներին վերաբնակվել են շուրջ 8000 ընտանիքներ:

• Զարգացող լեռնային արդյունաբերությունը դեպի իրեն ձգեց գյուղական բնակչությանը: Շրջակա գյուղերի շատ կուլտնտեսականներ կազմակերպված ձևով մշտական աշխատանքի անցան արդյունաբերության տարբեր տեղամասերում, այսինքն՝ գյուղական բնակչության նվազման հաշվին խիստ ավելացավ ռադաբային բնակչությունը: Այսպես, օրինակ, վերջին 20 տարում Զանգեզուրի գյուղական բնակավայրերի զգալի մասում բնակչությունը ոչ միայն չի ավելացել, այլ 13,4 տոկոսով պակասել է. իսկ 500-ից ավելի բնակիչ ունեցող 38 բնակավայրերում այդ կրճատումը հասել է 32,2 տոկոսի՝ այսինքն պակասել է մեկ էրրորդով: Իրա հիմնական պատճառը (եթե նկատի չառնենք պատերազմի և հետպատերազմյան առաջին ու երկրորդ հնգամյակներում գյուղատնտեսության բարձիթողի հետևանքով գյուղից քաղաք գնալու հանգամանքը, որ կանխվեց ՍՄԿՊ Կենտկոմի 1953 թ. Սեպտեմբերյան և հետագա պլենումների ու պարտիայի XX համագումարի — գյուղատնտեսության շեշտակի վերելքի՝ բնագավառում ձեռնարկած վճռական միջոցառումների շնորհիվ) գյուղատնտեսական աշխատանքների մեքենայացման մակարդակի բարձրացումն է, որ ուժեղացավ հատկապես վերջին տարիներում: Սոցիալիստական արդյունաբերության կողմից գյուղին մատակարարվող հարուստ տեխնիկական հնարավորություն տվեց գյուղատնտեսական շատ աշխատանքներ՝ ինչպիսիք են վարը, ցանքը, բերքահավաքը կատարել առավելապես մեքենաների միջոցով. որի հետևանքով մեծ թվով աշխատող ձեռքեր ազատվեցին և կազմակերպված կերպով աշխատանքի անցան արդյունաբերության ու շինարարության տարբեր տեղամասերում, որտեղ և հաստատեցին իրենց մշտական բնակությունը:

Մյուս կարևոր մոմենտն այն է, որ առանձին բնակավայրերում՝ արտադրական և կենցաղային դրույթյան մեջ կատարված արմատական փոփոխությունների շնորհիվ, փոխվեց և նրանցում ապրող բնակչության զբաղվածության բնույթը. բնակիչների մի մասը գյուղականից քաղաքայինի վերածվեց առանց նույնիսկ փոխելու իր բնակավայրը: Այսպես, օրինակ, գունավոր մետալուրգիայի խոշոր կենտրոն Քաջարան քաղաքը ձևավորվել է Ողջի, Վ. Հանդ, Քաջարան, Փիրոդուղան բնակավայրերի բազայի վրա, իսկ Ղափանը՝ Կավարտ, Բարաթում, Վաչագան, Արփիկ և 20-ից ավելի բնակելի կետերի հիմքի վրա: Արտադրողական ուժերի զարգացմանը զուգընթաց արտադրության կենտրոնացում է կատարվել նաև գյուղատնտեսության մեջ: Կուլտնտեսությունների խոշորացման հետևանքով $\frac{1}{3}$ պակասել է գյուղական բնակավայրերի թիվը—275-ից մնացել է 151-ը, իսկ գյուղական ամեն մի բնակավայրում ապրողների միջին թիվը ավելացել է հասնելով—277,2-ից մինչև 434,4 մարդու:

Լուրջ հետաքրքրություն է ներկայացնում նաև բնակչության տեղաբաշխվածությունը ըստ աշխարհագրական բարձրությունների. այն սկսվում է 500 մետրից և հասնում է մինչև 2300 մետրի (ծ. մ. հ.). բայց այդ երկու կետերի միջև ընկած տարածություններում բնակչության բաշխվածությունը խիստ ան-

¹ Այդ և թվական մյուս բոլոր տվյալները վերցրված է Հայկական ՍՍՌ Վիճակագրական վարչության արխիվից:

համաչափ է: Բնակչության կեսից ավելին (58,3 տոկոսը) ապրում է 900—1000, 1200—1300, 1600—1700, և 1900—2000 մետր բարձրությունների վրա գտնված հովիտներում:

Առաջին և վերջին աստիճաններում, որ համընկնում է Ողջի գետի միջին և վերին հոսանքների հետ, մարդկանց առավել կենտրոնացումը արդյունք է լեռնահանքային արդյունաբերության զարգացման, որ մեծ մասշտաբներով ծավալվեց հետպատերազմյան տարիներին: Նախկին սակավարնակ մի շարք փոքր բնակավայրերի փոխարեն քարտեզի վրա երևացին 10—20 հազար բնակչություն ունեցող Ղափան և Քաջարան սոցիալիստական քաղաքները, ստեղծվեց Ազարակ քաղաքատիպ ավանը—ռեսպուբլիկայի արդյունաբերության հարավային օջախները, որտեղ ներկայումս ապրում են Ջանգեզուրի բնակչության շուրջ մեկ երրորդ մասը:

Բնակչության կենտրոնացման մյուս վայրը հանդիսանում է Որոտան գետի հովիտը (2-րդ և 3-րդ աստիճանները), որտեղ իր նպաստավոր բնակչիմայական պայմանների շնորհիվ զարգանում է ինտենսիվ գյուղատնտեսությունը և անասնապահությունը: Այստեղ միաժամանակ ծավալվում են լեռնային և տեղական նշանակություն ունեցող արդյունաբերության ճյուղերը. ստեղծվել է Դաստակերտ քաղաքատիպ ավանը:

* * *

Վերոհիշյալ պատճառներով խիստ ավելացել է արդյունաբերության և շինարարության մեջ զբաղվածների տեսակարար կշիռը: Եթե սովետական ռազմաքիմ մարդահամարի (1926) ժամանակ աշխատանք ունեցող բնակչության 93,1 տոկոսը զբաղված էր գյուղատնտեսության մեջ և միայն 4,7 տոկոսը ֆարրիկա-գործարանային, տնայնագործական արդյունաբերության ու շինարարության մեջ, ապա հնգամյակների տարիներում պատկերը խիստ փոխվեց:

Վերջին մարդահամարի տվյալների համաձայն Ջանգեզուրի աշխատանք ունեցող բնակչության 83,4 տոկոսը ներգրավված է նյութական արտադրության ոլորտում, այդ թվում արդյունաբերության մեջ՝ 15,8 տոկոսը, շինարարության՝ 8,9 տոկոսը, տրանսպորտի և կապի մեջ՝ 3,2 տոկոսը, գյուղատնտեսության և անտառատնտեսության մեջ՝ 52,2 տոկոսը նյութական արտադրության այլ ճյուղերում՝ 3,3 տոկոսը:

Այսպես, 1959 թվականին՝ 1939 թվականի համեմատությամբ՝ արդյունաբերության մեջ զբաղվածների թիվը ավելացել է 3 անգամ, շինարարության մեջ՝ 4 անգամ, տրանսպորտում և կապում՝ 7 անգամ: Իսկ գյուղատնտեսության և անտառտնտեսության մեջ պակասել է՝ գյուղական որոշ բնակավայրեր քաղաքների, քաղաքատիպ ավանների վերածվելու և կոլտնտեսականների մի մասի արդյունաբերության մեջ աշխատանքի անցնելու պատճառով (տես 21-րդ էջի աղյուսակը):

Պետք է նկատի ունենալ և այն, որ եթե նյութական արտադրության ոլորտում բնդրկվածների թիվը բացարձակորեն աճել է, ապա նախորդ մարդահամարի համեմատությամբ նրա տեսակարար կշիռը մասամբ իջել է ո՛չ նյութական արտադրության ճյուղերում, մասնավորապես առողջապահության, լու-

Զանգեզուրի բնակչության բաշխվածությունը ըստ ժողովրդական տնտեսության ճյուղերի (ըստ 1939 և 1959 թվականների մարդահամարների տվյալների)

	1939	1959
Քաղաքային ունեցող բնակիչները այդ թվում՝	36881	47559
Արդյունաբերության մեջ	2444	7514
Շինարարության մեջ	691	4233
Պյուզատնտեսության և անտառատնտեսության մեջ	26744	24813
Տրանսպորտի և կապի մեջ	216	1529
Առևտրի, հասարակական սննդի և մթերումների մեջ	775	1498
Նյութական արտադրության այլ ճյուղերում		54
Բնակարանային և կոմունալ տնտեսության մեջ և կենցաղ սպասարկման ձեռնարկություններում	184	914
Առողջապահության, ֆիզկուլտուրայի, սոցիալական ապահովության մեջ	273	1358
Լուսավորության, գիտության, գիտ. սպասարկման և արվեստի մեջ	1473	4071
Վարկային, ապահովագրական վարչություններում, պարտիական և հասարակական այլ կազմակերպություններում	1163	1159
Ժողովրդական տնտեսության ճյուղերում. չբաշխվածներ	71	416

սավորության և կուլտուրայի ֆրոնտում աշխատողների թվի զգալի չափով աճելու և շնորհիվ:

Չի կարելի աչքաթող անել նաև աշխատանքային հասակ ունեցող որոշ թվով մարդկանո ժողովրդական տնտեսության ոլորտից դուրս մնալու հանգամանքը: Դրանք (շուրջ 20 տոկոս) տնային և օժանդակ տնտեսությամբ զբաղվողներ են: Դա մասամբ կարելի է բացատրել մանկական հիմնարկների (մանկամստուրների, մանկապարտեզների) ցանցի ոչ բավարար զարգացումով, մանավանդ գյուղական վայրերում. մինչդեռ դրանց կարիքը չափազանց անհրաժեշտ է ոչ միայն երեխաներ խնամող ծնողներին հանրօգուտ աշխատանքներում լրիվ ներգրավելու համար, որի կարևորությունը ժխտել չի կարելի, այլև նախադպրոցական տարիքի բոլոր երեխաներին դաստիարակելու տեսակետից: Անհրաժեշտ է նշել նաև հասարակական սննդի ցանցի դեռևս ոչ բավարար վիճակը: Պարզ է, որ նման վիճակը այլևս հանդուրժել չի կարելի, այն պետք է բոլորովին մանկական հիմնարկները և հասարակական սննդի ձեռնարկությունները ընդլայնելու միջոցով:

Զանգեզուրն ունի զարգացման լայն հեռանկարներ, հատկապես լեռնային արդյունաբերության գծով. ուժեղանալու են ընդերքի որոնումները՝ նոր հանքավայրեր հայտնաբերելու նպատակով. ծավալվելու են շինարարական նյութերի արտադրությունը, տեղական նշանակություն ունեցող արդյունաբերու-

թյան ճյուղերը և բնակարանային շինարարությունը. կառուցվելու են գյուղատնտեսական հումք վերամշակող մի շարք նոր ձեռնարկություններ և ընդլայնվելու են եղածները՝ բնակչության աճող պահանջները բավարարելու համար:

7-ամյակում պետք է ավելանա պղնձի, մոլիբդենի հանույթը, լրիվ կարողությամբ շահագործման պետք է հանձնվի Ագարակի պղնձամոլիբդենային կոմբինատը, կսկսվի Ղափանի պղնձի կոմբինատի նոր ֆարրիկայի և Որոտան գետի վրա նախատեսված հիդրոէլեկտրակայանների շինարարությունը, որի առաջին կայանը՝ Տաթևգէսը կավարտվի 1965 թվականին:

Ընդլայնվելու են Ղափանի, Մեղրու պահածոների և Գորիսի միկրոէլեկտրաշարժիչ գործարանները: Միայն վերջինս, 7-ամյակի վերջում երկրին կտա 1,5 միլիոն ուտիլի արտադրանք: Կաթնամթերքների վերամշակման նոր գործարաններ են կառուցվելու Տաթևում, Նորաշենիկում և Քաջարան քաղաքում:

Հիշյալ միջոցառումների իրականացումը պահանջելու է լրացուցիչ աշխատանք, զարգացող արդյունաբերության և շինարարության կարիքները բավարարելու համար:

Ուտի, ըստ հաշվումների, 7-ամյակի վերջում Զանգեզուրը միայն բնական աճի միջոցով կունենա 141 հազ. բնակիչ, իսկ 10—15 տարի հետո՝ 180—200 հազար, այդ թվում Ղափանի շրջանը կունենա 73—81 հազար, Գորիսը՝ 45—50, Սիսիանը՝ 44—49, Մեղրին՝ 18—20 հազար, որոնց մոտավորապես կեսը կլինեն աշխատանքային հասակ ունեցող բնակիչները, այսինքն՝ ներկայի համեմատությամբ նա կաճի 1,7 անգամ, իսկ զբաղված բնակչության նկատմամբ ավելի քան 2 անգամ: Եթե դրան ավելացնենք այդ տարիներում արդյունաբերության, շինարարության ու գյուղատնտեսության մեքենայացման հետևանքով ազատված աշխատող ձեռքերը, ապա այդ թիվը ավելի ևս բարձր կլինի:

Դրան համապատասխան պետք է զարգանան նաև շրջանի ժողովրդական տնտեսության բոլոր ճյուղերը. կծավալվի կուլտուրական շինարարությունը, կավելանան կապիտալ ներդրումները, որպեսզի հնարավոր լինի հանրօգուտ աշխատանքների մեջ լրիվ ընդգրկել աճած ուսուրսները, մինիմումի հասցնելու ժողովրդական տնտեսության մեջ շրջանակված աշխատունակ տղամարդկանց և կանանց՝ պատշաճ բարձրության հասցնելով մանկական հիմնարկների և հասարակական սննդի կազմակերպումը: Լուրջ փոփոխություններ են կատարվելու քաղաքի և գյուղի բնակչության կազմում: Հօգուտ արդյունաբերության մեջ զբաղվածների քանակի աճի՝ այժմ գոյություն ունեցող որոշ բնակավայրեր կվերածվեն քաղաքների և քաղաքատիպ ավանների:

Զարգացման տենդենցը այնպիսին է լինելու, որ աշխատանքային ուսուրսների ընդհանուր քանակի մեջ գյուղական բնակչության տնտեսակարար կշիռը գնալով պետք է նվազի, իսկ քաղաքայինը, ընդհակառակը, պետք է աճի: Ընթացողում է, որ Զանգեզուրի քաղաքային բնակչությունը երկու տասնամյակ հետո կհասնի 88,7 հազարի, ներառյալ գյուղականից քաղաքայինի վերածված որոշ բնակավայրեր, որտեղ ապրողների ընդհանուր թիվը կհասնի շուրջ 12—13 հազարի: Բնակչության ավելի քան կես մասը (52 տոկոսը) այդ ժամանակ կկազմի քաղաքային բնակչությունը, այսինքն՝ կաճի 6 տոկոսով:

Պետք է նկատի ունենալ նաև, որ գյուղատնտեսության զարգացման ըն-

թացքում փոքր բնակավայրերը՝ խոշորացվելու են: Դա անհրաժեշտ է նախ այն տեսակետից, որ Հանգեզուրի կուլտնտեսությունների ճնշող մասը փոքր և տնտեսապես թույլ են և այժմ ի վիճակի չեն օգտագործելու սոցիալիստական խոշոր տնտեսության բոլոր առավելությունները:

Երկրորդ—ամեն մի կուլտնտեսություն տերիտորիալ տեսակետից միայն մի գյուղ է ընդգրկում, որոնց ճնշող մասը փոքր և սակավարձակ լինելու հետևանքով ի վիճակի չեն արմատապես փոխելու գյուղի ապրելակերպը, ստեղծելու բարեկարգ ավաններ:

Ուրեմն՝ գյուղերի պլանավորման և բարեկարգման միակ ուղին միմյանց մոտ ընկած և միևնույն գյուղատվետի տերիտորիայի մեջ մտնող ու իրար սահմանակից փոքր բնակավայրերի աստիճանական խոշորացումն է: Փոքր բնակավայրերի խոշորացումը, որ կյանքը ինքն է թելադրելու, կնպաստի նոր սով խոզների և բանվորական ավանների առաջացմանը:

Այդ գործում որոշակի դեր է խաղալու միջկուլտնտեսային կապերի զարգացումը. նա անհրաժեշտ նախադրյալներ կնախապատրաստի նրանց աստիճանական միավորման համար:

Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի Արտադրողական ուժերի ուսումնասիրության խորհրդի գիտական աշխատողները 1958—1959 թվականների ընթացքում այդ հարցերը տեղում բազմակողմանիորեն օւսումնասիրելուց հետո և տեղական ղեկավարների հետ խորհրդակցելուց հետո, հանգեցին այն եզրակացության, որ գյուղատնտեսության արտադրության հետագա զարգացման և բնակչության կուլտ-կենցաղային սպասարկման շահերը պահանջում են փոքր բնակավայրերը միացնել ոչ թե անմիջապես, այլ աստիճանաբար, երկար ժամանակամիջոցում, տվյալ վայրերում ապրող բնակչությանը համոզելու միջոցով:

Նշելով տեղական պայմաններից, մեր կարծիքով այդ միավորումը պետք է իրականացնել:

1. ՂԱՓԱՆԻ ՇՐՋԱՆՈՒՄ

ա) Գեղիին, որն ունի բավականին հարթ ու ընդարձակ տարածություն, գեղեցիկ բնություն, խմելու և ոռոգման ջրերի անսպառ հնարավորություններ և համարվում է ենթաշրջանի կենտրոնը, կարելի է միացնել իր շուրջը ընկած Չայքենդ, Հաջաթեն, իսկ հետագայում նաև Գյարգ գյուղերը: Միավորումից հետո Գեղին կունենա 1400 հեկտար օգտագործվող հող, ընդարձակ արոտներ, 1400—1500 բնակիչ և կղառնա շրջանի բարեկարգ քաղաքատիպ ավաններից մեկը:

բ) Աջըլու, Ավսարլու գյուղերը, որտեղ մինչև այժմ, ճանապարհներ չլինելու պատճառով, ավտոմեքենաներ չեն մտել, կարելի է իջեցնել Ողջի գետի հովիտը, Մուսալամ գյուղի տերիտորիան: Խոշորացման շնորհիվ կեռապատկվեն Մուսալամի հողատարածությունները և բնակչության թիվը, իսկ Քաջարանում արդյունաբերությունը ընդարձակվելուց հետո, նրա բնակչության ճնշող մասը

¹ Աստ վերջին մարդահամարի տվյալների Ղափանի շրջանում մինչև 50 մարդ ունեցող կա 4 բնակավայր, 50—100 մարդ՝ 7, 101—200 մարդ 16 բնակավայր, 201—300 մարդ՝ 17 բնակավայր, այսինքն՝ եզած բնակավայրերի 72,2 տոկոսը կազմում են փոքր բնակավայրեր: Գորիսի շրջանում դրանք կազմում են 40 տոկոս, իսկ Մեզրու շրջանում՝ 24 տոկոս:

աշխատանքի կանցնի արդյունաբերության մեջ, այսինքն ավանի բարեկարգման հետ միասին կփոխվի և նրա արտադրական բնույթը:

գ) Փիրիլու, Դաշրաշ գյուղերը և դ) Աջիրաջ, Փայահան գյուղերը միավորվելուց հետո բնակչության թիվը 500-ից կանցնի և կկրկնապատկվի գյուղատնտեսության համար օգտագործվող հողատարածությունը:

2. ԳՈՐԻՍԻ ՇՐՋԱՆՈՒՄ

ա) միևնույն հողատարածությունը օգտագործող խորը կիրճերի մեջ գրտնրված Աղատաշեն, Ջրաշեն և Այգեձոր բնակավայրերը, որոնց ընդհանուր բնակչությունը 1000-ից ավել է, կարելի է բարձրացնել օդանավակայանի շրջակայքը: Միավորելուց հետո ավանը կունենա մոտ 3500 հեկտար օգտագործվող հող, մասամբ կփոխվի և նրա արտադրական բնույթը—կուլտնտեսայինից և սովխոզայինի կվերածվի և կզարգանան արդյունաբերության որոշ ճյուղեր, մասնավորապես կրի արտադրությունը:

բ) Շամսուզ, Ղուրդղալա գյուղերը կարելի է տեղափոխել Շուռնուխի 500-ից ավելի բնակիչ ունեցող ավանում կծավալվի փայտամշակման արտադրությունը, իսկ բնակչության մի մասը կշարունակի զբաղվել գյուղատնտեսությամբ և անասնապահությամբ:

3. ՍԻՍԻԱՆԻ ՇՐՋԱՆՈՒՄ

Իրար կարելի է միացնել Ղըղլաֆակ, Սոֆուլու, Մուրխուզ սովխոզային բնակավայրերը՝ մեկ քաղաքատիպ ավան ստեղծելու նպատակով: Շուրջ 1500 բնակիչ ունեցող նոր ավանում գյուղատնտեսության հետ մեկտեղ կսկսեն զարգանալ և արդյունաբերական փոքր ձեռնարկություններ, մասնավորապես անասնապահական մթերքներ վերամշակող ձեռնարկություններ: Հացավան, Թազա-գյուղ, Սալվարդ բնակավայրերի խոշորացնելուց հետո բնակչության թիվը կհասնի 1500-ի և կեռապատկվի օգտագործվող հողատարածությունը:

Որոտանի շինարարության կապակցությամբ Աշոտավան և Տուրոս գյուղերի բնակիչները կտեղափոխվեն շրջկենտրոն: Վերջինիս հետ է միանալու նաև Ուզ գյուղը: Այսպիսով, Սիսիանի բնակչությունը մոտակա 10—15 տարիներում կթափառվի, հետևապես պետք է ընդարձակվեն նաև արդյունաբերության և գյուղատնտեսության հումք վերամշակող ձեռնարկությունները, աճած աշխատանքային ռեսուրսները լրիվ զբաղեցնելու համար:

Այսպիսով, սույն միջոցառումների աստիճանական իրականացումը, որ հավասարապես պետք է տարածվի և շնչված մյուս բոլոր փոքր բնակավայրերի վրա, հնարավորություն կտա լրիվ օգտագործելու բնական և աշխատանքային ռեսուրսները՝ արտադրողական ուժերը զարգացնելու համար: Կառուցել արտադրական նոր օբյեկտներ, անհատական բնակարաններ, մանկամասեր, մանկապարտեզ, գիշերօթիկ դպրոց, հանրային ճաշարան, փուռ, փոստ, ակումբ, հիվանդանոց, բաղնիք և կենցաղ-սպասարկման այլ շենքեր: Այդ կառուցումները ամբողջապես կփոխեն գյուղի ներքին բովանդակությունը ու արտաքին տեսքը, և անհրաժեշտ պայմաններ կստեղծեն գյուղի և քաղաքի միջև եղած էական տարբերությունները հաղթահարելու գործում: